



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Կ Ա Ր Գ Ա Դ Ի Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի N 42-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի՝
կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2015 թվականի ապրիլի 28-ի
*«Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքները համակարգող
մարզային հանձնաժողով սրեղծելու և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2012 թվականի մարտի 7-ի N 17-Ա կարգադրությունը ուժը կորցրած ճանաչելու մասին»* N 42-Ա
կարգադրության 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Ստեղծել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման
աշխատանքները համակարգող մարզային հանձնաժողով հետևյալ կազմով.

1) *Ռոմանոս Պետրոսյան* - հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզպետ,

2) *Գուրգեն Ավերիսյան* - հանձնաժողովի նախագահի տեղակալ, Հայաստանի
Հանրապետության Կոտայքի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի-
մարզային հողային պետական տեսչության պետ,

3) *Եղիշե Ավերիսյան* - հանձնաժողովի քարտուղար, Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային
պետական տեսչության գլխավոր մասնագետ,

4) *Լիլիթ Ավերիսյան* - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության
Էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և
մոնիթորինգի վարչության Կոտայքի բաժնի պետի պաշտոնակատար (*համաձայնությամբ*),

5) *Կարեն Բայրամյան* - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատմության և մշակույթի
հուշարձանների պահպանության գործակալության Կոտայքի և Գեղարքունիքի տարածքային
բաժնի պետ (*համաձայնությամբ*),

6) *Աշոտ Սուրբիսյան* - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության շրջակա
միջավայրի նախարարության ընդերքի և հողերի պահպանության քաղաքականության

վարչության հողերի պահպանության քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ
(համաձայնությամբ),

7) Հարություն Հարությունյան - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության
քաղաքաշինության կոմիտեի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության
ճարտարապետության բաժնի գլխավոր մասնագետ (համաձայնությամբ):»:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2019 թվականի սեպտեմբերի 27
ք. Հրազդան
N 176-Ա



Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ